ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԲԳԱՐՅԱՆ

Ժամանակակից հասարակության մեջ բնակչության տեղաշարժերը հիմնականում պայմանավորված են մարդկանց ռացիոնալ որոշմամբ՝ գտնելու կյանքի և աշխատանքի լավագույն պայմաններ: Գիտական գրականության մեջ տարբերում են միգրացիայի երկու տիպեր՝ կամավոր և հարկադրված: Կամավոր միգրացիայի դեպքում անձը սեփական կամքով տեղաշարժվում է մեկ այլ վայր, իսկ հարկադրյալ միգրանտները լքում են իրենց բնակության վայրը բռնության, հետապնդման, բնական աղետների, ֆիզիկական բնակության անհնարինության դեպքում[1]:

Սույն հոդվածում ցանկանում ենք ներկայացնել հարկադրված միգրացիայի դիմողների՝ փախստականների ինտեգրման խնդիրները:

Միջին Արևելքում, մասնավորապես Սիրիայում սկիզբ առած և շարունակվող կոնֆլիկտները ինչպես Եվրոպայում, այնպես էլ ամբողջ աշխարհում փախստականների թվի կտրուկ աճին նպաստող գործոններ են: Հետևաբար միջազգային հանրության ուշադրության կենտրոնում են մնում փախստականների վերաբնակեցման և ինտեգրման խնդիրները: Ըստ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՄԱՓԳՀ) տվյալների՝ 2017 թ. հաշվարկվել է մոտավորապես 22,5 միլիոն փախստական ամբողջ աշխարհում: Սա ամենաբարձր մակարդակն է վերջին քսան տարում (UNHCR 2017):

Նախքան փախստականների վերաբերյալ հարցերին անդրադառնալը անհրաժեշտ է սահմանել «փախստականներ» եզրույթը, հստակեցնել, թե հասարակության ո՞ր շերտին են նրանք պատկանում, ինչպիսի չափանիշներով են զատորոշվում և ինչպիսի վերապահումներ են նախատեսվում նրանց համար ինչպես միջազգային փորձագետների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

ՄԱՓԳՀ գրասենյակի առաջարկած սահմանումը հիմնված է փախստականների վերաբերյալ 1951 թ. միջազգային կոնվենցիայի և իր 1967 թ. սահմանած արձանագրության սկզբունքի վրա: Ըստ վերոնշյալ միջազգային փաստաթղթերի՝ «փախստական» է համարվում «ռասայի, կրոնի, քաղաքացիության, որոշակի սոցիալական խմբի կամ քա-

[1] Տե՛ս **Գ. Թումանյան,** «Փախստականների ինտեգրման հիմնախնդիրները եվրոպական քաղաքացիական հասարակության դիսկուրսում» // http://ysu.am/files/02A_Romanova_M_Topchiev_L_Kholova_r.pdf, էջ 2:

դաքական կարծիքի հարելու պատճառով հետապնդվելու հիմնավորված երկյուղի հետևանքով իր քաղաքացիության երկրից դուրս գտնվող անձը, որն անկարող է կամ նման երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և նման իրադարձությունների հետևանքով գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, անկարող է կամ նման երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ»[2]:

Ըստ 2008 թ. նոյեմբերի 27-ին ընդունված «Փախստականների և Ապաստանի մասին» ՀՀ օրենքի՝ փախստական է համարվում այն անձը, որը համապատասխանում է 1951 թ. միջազգային կոնվենցիայի չափանիշներին, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը, որը պաշտոնապես փախստական է ճանաչվել կոնվենցիան ստորագրած այլ պետությունների կողմից:

Վերոնշյալ չափանիշները, որոնք կիրառվում են փախստականի կարգավիճակը սահմանելու նպատակով, կիրառելի են ինչպես արտակարգ իրավիճակներում, այնպես էլ բնականոն պայմաններում: Փախստականի կարգավիճակի սահմանումը տվյալ անձին կամ անձանց խմբին տալիս է որոշակի իրավունքներ և պարտականություններ: Հիմնական իրավունքներից է ծագման երկիր չվերադառնալու իրավունքը, որտեղ տվյալ անձին վտանգ է սպառնում:

Հաճախ արտակարգ իրավիճակներում փախստականի կարգավիճակը անմիջապես չի սահմանվում, սակայն եթե անձը հատում է երկրի սահմանը իր կյանքին սպառնացող վտանգի պատճառով, նա արդեն համարվում է փախստական: Այդ դեպքում փախստականի կարգավիճակը դեռևս պաշտոնապես ընդունված չէ, սակայն, ըստ միջազգային որոշ կազմակերպությունների, տվյալ անձը կամ անձանց խումբը պաշտպանված է իր ծագման երկիր վերադառնալու և կյանքին սպառնացող վտանգ ի հայտ գալու հնարավորությունից[3]:

Ըստ ՀՀ օրենսդրության՝ փախստականներն ունեն ՀՀ քաղաքացիներին հավասար իրավունքներ սեփականության, մտավոր սեփականության, վարձատրվող աշխատանքի և այլ պայմանների համար:

Առկա են որոշակի սոցիալական հարցեր, որոնք պահանջում են առանձնահատուկ ուշադրություն փախստականների հարցերով զբաղվող կառույցների համար: Կատարվում են ուսումնասիրություններ այս խնդիրների նախադրյալներն ու հիմքերը պարզաբանելու և ավելի հասցեական միջոցառումներ ձեռնարկելու նպատակով: Այդպիսի կարևորագույն հարցերից է փախստականների ինտեգրումը ապաստան տվող երկրի հասարակության մեջ, որը մեծապես կարևորվում է միջազգային հանրության, մասնավորապես ՄԱՓԳՀ գրասենյակի կողմից, քանի որ դա ամրագրված է 1951 թ. կոնվենցիայի 34-րդ հոդվա-

[2] «Convention and protocol relating to the status of refugees –UNHCR», p. 3-4.

[3] Տե՛ս «Refugee definition»- /https://emergency.unhcr.org/entry/55773/refugee-definition/

ծում[4]: Հետևապես կոնվենցիան ընդունած երկրները պարտավորվում են ձեռնարկել միջոցառումներ փախստականների հաջող ինտեգրման և խտրականության նվազեցման համար: Կոնվենցիան ենթադրում է, որ ժամանակի ընթացքում փախստականների կապը իրենց ընդունող երկրի հետ մեծանում է, և այդ պարագայում հարկավոր է փախստականների տնտեսական և սոցիալական անկախության վերականգնման աշխատանքներ ձեռնարկել:

Եվրոպական մի շարք երկրներ մեծ աշխատանքներ են իրականացնում երրորդ աշխարհի ազգերի ներկայացուցիչներին ինտեգրելու նպատակով: Սակայն փախստականները խոչընդոտների են հանդիպում մի քանի գործոնների պատճառով, ինչպիսիք են իրենց երկրի պաշտպանությունը կորցնելը, զինված կոնֆլիկտների փորձը, փաստաթղթերի ձեռքբերման դժվարությունները և այլն: Ինտեգրման հաջող ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այս գործոնները և տվյալ խմբի կարիքները[5]:

ԱՄՆ-ում և զարգացած այլ պետություններում տարվում են աշխատանքներ փախստականների հաջող ինտեգրման ուղղությամբ: Ասվածի վկայությունը, օրինակ, ԱՄՆ-ի Կոլորադո նահանգում անցկացված հարցումն ու գնահատումն են[6]: Այս հետազոտական ծրագրի նպատակն էր գնահատել վերաբնակեցման վաղ տարիներին փախստականների ինտեգրումը ԱՄՆ հասարակությանը, որի շրջանակներում ուսումնասիրվել է փախստականների մի խումբ վերաբնակեցումից հետո առաջին երեք-չորս տարիներին: Հետազոտական անձնակազմը նախապես մշակված հարցաշարի միջոցով Բութանից, Բիրմայից, Սոմալիից և Իրաքից 2011-2012 թթ. գաղթած նորեկ չափահաս փախստականների շրջանում անցկացրեց ֆոկուս խմբային և խորին հարցում՝ ինտեգրման ընթացքում փախստականների փորձի բազմազանությունը պարզաբանելու համար: 2014-2015 թթ.՝ տվյալների հավաքման չորրորդ տարում հարցումն անցկացվեց հետազոտության սկզբում ընդգրկված 467 փախստականներից 327-ի՝ շուրջ 70 տոկոսի հետ, ինչը հետազոտության հավաստիության բարձր ցուցանիշ է:

Տվյալները հավաքվել են համայնքի այսպես կոչված «կապող օղակների» միջոցով, որոնց մեծ մասը տարիներ առաջ ԱՄՆ եկած փախստականներ էին:

Հետազոտությունն անցկացնելու առաջին 2-3 տարիներին հարցվողներին խնդրել են մեկնաբանել, թե որքանով են մատչելի հարցաշարում ներառված հարցերը: Հետազոտության երրորդ տարվանից

---

[4] Տե՛ս «A new beginning Refugee Integration in Europe» – UNHCR /Sep 2013/, էջ 11:

[5] Տե՛ս նույն տեղը, էջ 12:

[6] Տե՛ս «The Refugee Integration Survey and Evaluation (RISE) Year Five: FInal Report /A study of refugee integration in Colorado/» - Colorado Office of Economic Security / Feb 22, 2016/, էջ 3:

սկսած՝ հարցումները կենտրոնացվեցին փախստականների փորձի ավելի խորը ուսումնասիրության վրա: Իսկ վերջին տարում առանձնացվեցին նրանք, ովքեր ունեին ինտեգրման ցածր մակարդակ: Վերջիններիս շրջանում կատարվեց լրացուցիչ հարցում՝ նրանց ինտեգրման խնդիրները պարզաբանելու համար՝ խմբավորելով ըստ տարիքի, սեռի և աշխատանքի:

Հետազոտության շնորհիվ բացահայտվեցին փախստականների ինտեգրմանն առնչվող հիմնական խնդիրները. պարզվեց, որ առկա են սոցիալական մեկուսացման բարձր մակարդակ, լեզվական խոչընդոտ: Գոյություն չուներ նաև ինտեգրման մակարդակի բարձրացմանը նպաստող որևէ կազմակերպություն: Այլ խոսքով՝ առանձնացվեցին մի շարք խոչընդոտներ, որոնք, բնականաբար, առկա են նաև փախստականների մեծ ներհոսք ունեցող երկրներում: Ի հայտ եկան նաև ինտեգրմանը նպաստող մի շարք գործոններ, որոնցից առանձնապես կարևորվում են երեխաների խնամքը, ֆինանսական աջակցությունը:

Այս գործոնները հնարավոր է գնահատել նաև Հայաստանի Հանրապետությունում, որը, միանալով 1951 թ. միջազգային կոնվենցիային, նույնպես պարտավորվում է իրականացնել այսօրինակ միջոցառումներ փախստականներին առնչվող խնդիրների արդյունավետ լուծման ուղղությամբ: Ընդհանուր առմամբ, մեր օրենսդրական դաշտը համապատասխանում է միջազգային կոնվենցիայի սկզբունքներին և փախստականների վերաբերյալ իրավական ոլորտի հարցերի կարգավորման հնարավորություն է տալիս: Սակայն, ինչպես նշում է Ա. Հակոբյանը իր հրապարակման[7] մեջ, վերջին տարիներին սիրիահայ փախստականների ներհոսքը Հայաստան տնտեսապես և սոցիալապես նախատեսված չէր: Հետևաբար ի հայտ եկան խնդիրներ նրանց ինտեգրման, սոցիալական և տնտեսական անկախության ապահովման և այլ հարցերում:

Մյուս կողմից՝ Ֆ. Զաքարյանի[8] հրապարակման մեջ նշվում է, որ ՀՀ կառավարությունը իրականացնում է համակարգված աշխատանքներ՝ սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի և առանձին աշխատանքային խմբերի միջոցով լուծելու փախստականների բնակարանային, աշխատանքային, առողջապահական, կրթական խնդիրները:

Միջազգային կազմակերպություններն իրենց հերթին մասնակցում են սիրիահայ փախստականների հետ կապված հիմնախնդիրների լուծմանը: Մասնավորապես, Եվրամիությունը այդ նպատակով

---

[7] Տե՛ս **Ա. Հակոբյան,** Սիրիահայերը Հայաստանում. Հայրենադարձնե՞ր, թե՞ փախստականներ: Բաց հասարակության հիմնադրամ-Հայաստան / http://www.osf.am/wp-content/uploads/2017/11/.pdf

[8] Տե՛ս **Ֆ. Զաքարյան,** Հայաստանի Հանրապետությունում ապաստան գտած սիրիահայերին տրամադրվող աջակցության վերաբերյալ // http://www.mindiaspora.am/res/Hratarakumner/2013/all%20haj-rus.pdf/

հատկացրել է շուրջ 3 մլն եվրո։ Առաջարկված ծրագիրը նպատակ ունի աջակցելու սիրիահայ փախստականների վերաբնակեցմանն ու ինտեգրմանը հայ հասարակությանը։

Որպես սիրիացի փախստականների ինտեգրմանը խանգարող գործոններ ծրագրում մատնանշվում են հատկապես առողջապահության և կրթության անհասանելիությունը, կացության բավարար պայմանների և աշխատանքի բացակայությունը։

Սիրիահայ փախստականների առողջապահական ծառայությունների հասանելիության խնդիրը լրջանում է այն պատճառով, որ շատ սահմանափակ միջոցներ են հատկացված այս ոլորտի բարելավման համար։ Հայաստան ժամանելիս չի անցկացվում անհրաժեշտ ընդհանուր բժշկական ստուգում, մանավանդ վերջին տարիներին ժամանած փախստականների առողջական վիճակն անբավարար է՝ երկար ժամանակ զինված կոնֆլիկտի պայմաններում ապրելու հետևանքով։ Փախստականներից շատերն ունեն հոգեբանական տրավմաներ։ Այս խնդրի լուծման ուղղությամբ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը հիմնել է բժշկական հաստատություն, որը, սակայն, մասամբ է կարողանում բավարարել այս խոցելի խմբի կարիքները։

Առավել կարևոր խնդիրներից է կեցության վայրի ապահովումը։ Բանն այն է, որ բնակարանների վարձակալությունը շատ դեպքերում անհասանելի է փախստականներին տրամադրվող ֆինանսական միջոցների սղության պատճառով։ Եվ պատահական չէ, որ սիրիահայերի շուրջ 30 %-ը այլ երկիր է մեկնել հիմնականում բնակարանային խնդիրների պատճառով։

Մեկ այլ հրատապ խնդիր է գործազրկությունը։ 2008 թ. ի վեր սիզբ առած տնտեսական համընդհանուր ճգնաժամի հետևանքով ՀՀ-ում 2015 թ. գործազրկության մակարդակը հասավ 18,5 %-ի։ Այս բարձր ցուցանիշը իր հերթին բացասական ազդեցություն է ունենում փախստականներին աշխատանքով ապահովելու խնդիրը լուծելու վրա, որն էլ նպաստում է փախստականների արտագաղթին Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներ։

Այս խնդիրներին զուգընթաց՝ կարևորվում է նաև կրթության հասանելիության հարցը։ Բանն այն է, որ փախստականների խնդիրներով զբաղվող ճանաչված մասնագետներից շատերը հենց կրթությունն են համարում երեխաների և երիտասարդների բարեհաջող ինտեգրման վճռորոշ գործոն[9], որը կարևոր դեր է խաղում նաև մեծահասակների՝ տվյալ երկրում մնալու կամ չմնալու գործում։ Թեև Հայաստանում նա-

[9] Տե՛ս, օրինակ, **Katia Scannavini,** New Generation: Young Migrant People in Italy (Նոր սերունդ. երիտասարդ ներգաղթյալները Իտալիայում) // http://www.ysu.am/files/03K_Scannavini.pdf, էջ 36:

խաղպրոցական և դպրոցական կրթությունը ընդհանուր առմամբ հասանելի է երեխաներին, այնուամենայնիվ նյութական, տնտեսական խնդիրների պատճառով անհրաժեշտ են միջոցներ լրացուցիչ խմբակների (լեզվի դասընթացներ, սպորտաձևեր, մշակութային միջոցառումներ և այլն), ինչպես նաև բարձրագույն կրթության համար Հայաստանի Հանրապետությունում ներկայումս առկա սոցիալ-տնտեսական բազում դժվարությունների պայմաններում, բնականաբար պետությունը ոչ միշտ է կարողանում սիրիահայ ներգաղթյալ երեխաների ու երիտասարդների դպրոցական և բուհական կրթության համար հատկացնել դրամական անհրաժեշտ միջոցներ: Ինքնին հասկանալի է, որ չունենալով առաջնահերթ կարիքների (կրթություն, առողջություն, աշխատանք) պահանջմունքները լիարժեք իրականացնելու հնարավորություն, սիրիահայ փախստական-ներգաղթյալները, ինչպես հարկն է, չեն ներառվում հանրապետության քաղաքական ու մշակութային կյանքի մեջ, որն, անշուշտ, նույնպես պատճառ է դառնում այլ երկրներ տեղափոխվելու[10]:

Սիրիահայ փախստական-ներգաղթյալների՝ մեր երկրում բարեհաջող գործունեություն իրականացնելու համար կան այլ դժվարություններ ևս. գաղտնիք չէ, որ արևմտահայ և արևելահայ մայրենիների միջև առկա տարբերությունները, մեզանում ռուսերենի և անգլերենի լայնորեն գործածությունը լրացուցիչ դժվարություններ են ստեղծում կրթական համակարգում սիրիահայ երեխաների և երիտասարդների ինտեգրման գործում[11]:

Իհարկե, նշված խնդիրների լուծման նպատակով ձեռնարկվել և ձեռնարկվում են բազմաթիվ այլ միջոցառումներ, որոնցից հիշատակելի է հատկապես համացանցային տեղեկատվական հարթակների ստեղծումը[12]:

Այսպիսով, ամփոփելով վերը ասվածը, կարող ենք եզրակացնել, որ չնայած խնդիրների բարդությանն ու ծավալին, թե՛ պետական, թե՛ հասարակական կառույցներն ու կազմակերպությունները շարունակում են իրավիճակից բխող քայլեր կատարել սիրիահայ փախստականներին հասարակությանն ինտեգրելու ուղղությամբ: Իրականացվում են կրթական, առողջապահական ու բիզնես ծրագրեր՝ դրանցում ներգրավված փախստականներին ընձեռելով իրենց ունակությունները դրսևորելու և հանրային կյանքին հարմարվելու հնարավորություն:

---

[10] Տե՛ս **Գ. Հակոբյան**, Սիրիահայերի քաղաքական մասնակցության առանձնահատկությունները ՀՀ-ում, «Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա. Տնտեսագիտություն», 2016, № 2(20), էջ 52 // http://ysu.am/files/05G_Hakobyan.pdf

[11] Տե՛ս «Support for Syrian Refugees in Armenia- EU Regional Trust Fund in Response to the Syrian Crisis, the 'Madad Fund'»

[12] Տե՛ս **Գ. Թումանյան**, Փախստականների ինտեգրման հիմնախնդիրները եվրոպական քաղաքացիական հասարակության դիսկուրսում» էջ 3:

Բանալի բառեր – *փախստական, փախստականի կարգավիճակ, միգրացիա, ինտեգրում, խոցելի խմբեր*

АРУСЯК АБГАРЯН – ***Проблемы беженцев в Республике Армения***. – В статье разбираются термин «беженец», международные конвенции и протокол для выявления лиц, являющихся беженцами, а также права и обязанности последних. Кроме того, затронуты проблемы успешной интеграции беженцев в странах Америки и Европы, в частности в Армении.

Ключевые слова: *беженец, статус беженца, миграция, интеграция, уязвимые группы*

ARUSYAK ABGARYAN – ***The Issues of Refugees in the Republic of Armenia.*** **–** The article presents the definitions of the term “refugee”, presents the international convention and protocol, defining refugees, their rights and duties. Furthermore, the article discusses problems associated with the integration of refugees in their host countries.

Key words: *refugee, refugee status, migration, integration, vulnerable groups*